

կարնաս՝ անարատ կուլ տուր, զի խորհրդաւոր է» : Թե կարնաս, ուրեմն այդ զրոյին կոկորդն ինքնին կը բողոքէր՝ ամբողջ հակիթը կուլ տալու այդ անտեղի գաղափարին կամ սովորութեան դէմ :

Տաթեւացւոյն վերոյիշեալ բացատրութիւնը, « զոր (ձուն), մեք ի ձեռն առեալ, յայտնապէս զփրկութիւն մեր քարոզեմք », պարզ ուտելէ աւելի բանի մը մասին կը խօսի, ինչպէս կը կարծեմ. այս ինքն է՝ կարմիր հակիթները բռնած իրենք ձեռներուն մէջ, ուրախութեամբ ման կու գային փողոցները, « յայտնապէս քարոզելով » նոյն օրուան յիշատակը :



Ե. ՀԱՅ ՄԱՏԱՂԸ ՉՈՂ ԷՐ

Տեսանք հայ ազգային արտաքին այլազան նկարագիրը : Բայց խորհող միտքը հոս չի կասիր, եւ կը ձկտի խնդրոյն հոգեբանութեան՝ որոյ մէջ է անոր լուծումը, ուտի եւ կարեւորագոյն կէտը : Իմ առաջարկութիւնը՝ « հայ մատաղը զո՞ն » յանդուգն է եւ ծանր, գիտեմ : Գարեբուրդըով ժխտուած ամբաստանութիւնն է՝ զոր ստիպուած եմ կրկնելու. եւ զիս ըս-